

Վարդան Գ. Դերիկյան
Բանաս. գիյր. դոկտոր

«Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականությունը, բայց ոչ մի տեղ չկարողացան հավասարվել Վենետիկի հայ կրոնավորներին, որոնք երկար ժամանակ անհաղթելի և աննկուն տիտանների նման էին երևում ազգի աչքին»¹:

ԼԵՈ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՄՇՏԱՆՈՐՈԳ ԼՈՒՅԱԸ

Մխիթարյան միաբանության՝ Վենետիկում հաստատվելու
300-ամյակի առթիվ*

Բանալի բառեր– Մխիթար Սեբաստացի, Մխիթարյան միաբանություն, Սուրբ Ղազար, Հայկազյան բառարան, Միքայել Չամչյան, Նահապետի (պատրիարքի) երգեր, Օսսիան, «Բազմավէյ»:

Մուտք

18-րդ դարը սկսվեց Մխիթարյան միաբանության հիմնադրումով և Սյունիքում ու Արցախում բռնկված ազատագրական շարժմամբ: Ինչպես գրում է Մխիթարյան հայրերից Հ. Ս. Արամյանը. «Հայաստանի լեռներէն կը ժայթքէին զոյգ հրաբուխներ, որոնց ջերմութիւնը պիտի հրավառէր հայ միտքն ու սիրտը և ոյժ պիտի տար հայ բազուկին՝ ցնցելու բռնակալութեան ու ստրկութեան լուծը»²:

Մխիթարյան միաբանության հիմնադրումը և Սյունիքի ու Արցախի ազատագրական պայքարը ժամանակի հրամայականի՝ իրար ներքնապես կապված դրսևորումներն էին: Ծավալված ապստամբական շարժումը գալու էր հավաստելու, որ չեն մարել հայ հայրենիքի կենսական ուժերը, ինչն իր հերթին մի նոր լիցք էր հաղորդելու նաև հայ դպրությանը: Այն առանձնակիորեն էր ոգևորելու հատկապես Մխիթարյան միաբանությանը, թե զուր չի անցնելու իրենց անարյուն նվիրումը հայ մշակույթին Արիատիկի գեղածիծաղ ավերին:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 27. 11. 2017:

1 ԼԵՈ, Հայկական տպագրություն, Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 5-րդ, Եր., 1986, էջ 360:

[Leo, Haykakan t'pagrowth'youwn, Erkeri zhoghovacow tasə hatorov, hat. 5-rd, Er., 1986].

2 Դաւիթ Բեկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխտ. Հ. Ս. Արամեան, Վենետիկ, 1978, էջ 6 [Davit Bek kam «Patmowt'youwn Ġap'ancvoc», ašxt. H. S. Aramean, Venetik, 1978].

ԼԵՈ (ԺԵ) րարի, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017
ՎԷՎ համահայկական հանդես

Ինչպես 18-րդ դարասկզբի հայ ազատագրական պայքարի բռնկմանը նախորդել էր տևական նախապատրաստական շրջանը, այնպես և Մխիթարյան միաբանության ստեղծմանն էին նախորդել հայ վանական կյանքի վերանորոգության և այն նոր շրջանի պատմության առաջադրած ազգային խնդիրների լուծմանը ծառայեցնելու ավելի քան հարյուրամյա շրջանի ձիգերը:

Հարկավոր էր այն անձնավորությունը, որն ի գորու էր իրականացնելու ժամանակի առաջադրած խնդիրները: Կան մարդիկ, ովքեր ժամանակից հետ են մնում և լավագույն դեպքում վերածվում են շքեղ ժամանակավրեպության: Կան մարդիկ, ովքեր որպես ողբերգական և հերոսական անհատներ ժամանակից առաջ են ընկնում՝ թողնելով լուսավոր մի հետագիծ: **Ժամանակի վրա իրենց դրոշմն են դնում այն մարդիկ, ովքեր ծնվում են ժամանակի թելադրանքով, գործում ժամանակի առաջադրած պահանջներին համահունչ և դառնում ժամանակի մարդը:** Հայ իրականության նման եզակի անհատներից ու մեծություններից էր Մխիթար Սեբաստացին:

Սեբաստիայի Հողդար թաղամասում 1676 թ. ծնված ապագա գիտնական վարդապետին էր վիճակված հեղաբեկելու հայ մտավոր կյանքը և իրավամբ անվանվելու «Լուսանորոգն Մխիթար»: Նա կոչված էր վերավառելու մեր վանքերի դարավոր կամարների ներքո դանդաղորեն մարող լույսը: Մխիթարի երազանքն էր այն իրականացնել հայրենյաց նվիրական հիշատակներով օծուն մեր պատմական վանքերից մեկում:

Ս. Էջմիածնի, Սևանի ու Կարինի (Էրզրում) վանքերում վանական կրթություն ստացած, 1696 թ. կուսակրոն քահանա ձեռնադրված և 1699 թ. վարդապետ դարձած երիտասարդ հոգևորականը, սակայն, հարկադրված այլ ճանապարհ է ընտրում: Մխիթար Սեբաստացին, Հայաստանում վանքից վանք անցավ, այնուհետև Պոլսից Եվրոպա գնաց՝ հասկանալով, որ Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի պայմաններում անհնարին է իրականացնել իր ծրագիրը՝ վերականգնել անցյալի ավանդները, զարկ տալ հայ կյանքի լուսավորությանը և տարածել ժամանակի եվրոպական քաղաքակրթության ու գիտության նվաճումները: Քիչ անց՝ Վենետիկում Մխիթարը լիովին իրականացրեց այդ խնդիրը, և 18-րդ դարը մեր մտավոր մշակույթի պատմության մեջ, Լեոյի բնորոշմամբ, իրավամբ դարձավ Մխիթարյան դար³:

1700 թ. գնալով Կ. Պոլիս՝ նա իր շուրջն է հավաքում 15 աշակերտների և կրոնական ու հրատարակչական գործունեություն ծավալում: 1701թ. Պոլսում հիմնադրված միաբանությունը, որպեսզի կարողանա ազատորեն գործել, 1703 թ. փոխադրվում է Մորեայի (Հին Պելոպոնես) Վենետիկին ենթակա Մեթոն բերդաքաղաքը: Հռոմի Պապը 1712 թ. հաստատում է միաբանության կանոնադրությունը՝ Մխիթարին նշանակելով Աբբահայր: Միաբանության համար ընտրվում են Ս. Բենեդիկտոսի կանոնները, որոնցով Մխիթարյաններն առաջնորդվում են մինչև այժմ: 1715 թ. երբ պատերազմ է սկսվում Օսմանյան կայսրության և Վենետիկի հանրապետության

3 Տե՛ս Լեո, Հայ գրքի տոնը, Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 5-րդ, էջ 596: [Leo, Hay grki tona, Erkeri zoghovacow tasə hatorov, hat. 5-rd, Er., 1986]

միջև, Մխիթարը միաբանությունը փոխադրում է Վենետիկ: Այդ ժամանակ թեև օտար միաբանություններին տեղ չէին հատկացնում, սակայն Վենետիկի իշխանությունները բարձր գնահատելով Մխիթարի գործունեությունը, բացառության կարգով թույլ են տալիս, և 1717 թ. սեպտեմբերի 8-ին Մխիթար Սեբաստացին իր 16 աշակերտների հետ, ովքեր դարձան միաբանության հիմքը, հաստատվում են նախկինում բորոտների համար կացարան եղող Ս. Ղազար (Սան Լազարո, որտեղից և **լազարեթ** անվանումը) կղզում⁴:

Միաբանության հիմնումը 1701 թ., ապա և 1717 թ. Ս. Ղազար փոխադրությունը կատարվում է Տիրամոր ծննդյան օրը՝ սեպտեմբերի 8-ին, համաձայն այն ավանդության, որ Մխիթարը դեռևս երիտասարդ վարդապետ, ծանր հիվանդանում է Սևանի կղզում: Գրեթե կուրացած աղոթում է վանքի Տիրամոր պատկերի առջև և դիմում Ամենասրբուհի Կույսին, թե արդյոք իրեն չի վիճակվելու ստեղծել իր երազած միաբանությունը: Տիրամոր սրբապատկերից հնչում է «Եղիցի», այսինքն «Կլինի, կիրականանա Քո երազանքը», որից հետո վերականգնվում է Մխիթարի տեսողությունը⁵:

Միաբանության անդամներն այս պատճառով իրենց անվանում են Սուրբ Կույսի որդեգիրներ, որը գրված է նաև միաբանության զինանշանի վրա՝ «Ո. Կ. Վ. Ա.» Որդեգիր Կույսին, Վարդապետ Ապաշխարութեան»⁶:

1. Խաչատուր Էրզրումեցին և Մխիթարյան միաբանությունը

Մխիթարյան միաբանության հետ սերտորեն կապված էր Խաչատուր վարդապետ Էրզրումեցին, որը կարևոր դեր է ունեցել նաև Մխիթար Սեբաստացու կյանքում: Նա ծնվել է 1666 թ. Կարինում (Էրզրում): Նախ ուսանել է ծննդավայրում, ապա գնացել Էջմիածին, որից հետո 1682 թ. մեկնել է Հռոմ և ընդունվել Ուրբանյան վարժարանը՝ տիրապետելով մի քանի լեզուների և խորանալով աստվածաբանության ու փիլիսոփայության մեջ:

Խաչատուրը Հռոմի կողմից ուղարկվում է Կ. Պոլիս, ուր մեծ հռչակ է ձեռք բերում որպես քարոզիչ վարդապետ: Նրան է դիմում նաև Մխիթարը՝ առաջարկելով դառնալ իր ծրագրած միաբանության առաջնորդը: Էրզրումեցին անգործադրելի համարելով նման ծրագիրը, հրաժարվում է վերջինիս իրականացմանը մասնակցելուց:

Այնուհետև նա ևս հեռանում է Պոլսից միջդավանական վեճերի պատճառով և հաստատվում Վենետիկում՝ դառնալով տեղի Ս. Խաչ հայկական եկեղեցու ավագ քահանան: Երբ Մխիթարյան միաբանությունը փոխադրվում է Վենետիկ, Խաչատուր Էրզրումեցին դառնում է միաբանության գործակիցը և աջակիցը: Նա քանիցս Հռոմում Մխիթարյան միաբանու-

4 Մխիթար Սեբաստացու կենսագրությունը. տես **Ստեփաննոս Գիւրեք Ազոնց**, Պատմութիւն կենաց և վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացոյ ըարունապետի և արքայի, Վենետիկ, 1810, տես նաև **Թորոսեան Հ.Յ.**, Վարք Մխիթարայ արքայի Սեբաստացոյ, Վենետիկ, 1901: [Stepannos Giwer Agonc, Patmowt' yown kenac ev varowc Tearñ Mxitaray Sebastacwoy rabownapeti ev abbayi, Venetik, 1810. **Torosean H. Y.**, Vark' Mxitaray abbayi Sebastacwoy, Venetik, 1901].

5 Տես **Թորոսեան Հ. Յ.**, Վարք Մխիթարայ արքայի Սեբաստացոյ, էջ 75: [Torosyan H., Y., Vark Mxiaray abbayi Sebastacwoy, p. 75].

6 Նույն տեղում, էջ 161: [Ibidem, p. 161].

թյունը պաշտպանել է եղած մեղադրանքներից:

Թեև հակադիր բևեռներ, սակայն ներդաշնակ մի ամբողջություն են կազմում Մխիթար Աբբահայրը և Խաչատուր վարդապետ Էրզրումեցին: Մխիթարը Հայաստանի դժնդակ իրականության մեջ իր կազմակերպած վանական միաբանությամբ եվրոպական աստիճանի բարձրացրեց գրական-մշակութային և գիտաուսումնական կյանքի կազմակերպումն ու հայ գրատպությունը, բոլոր բնագավառներում առաջնորդվելով հայ կյանքի թելադրանքով: Խաչատուր Էրզրումեցին՝ որպես քարոզիչ վարդապետ, առավել քան իր մյուս ժամանակակիցները, գիտեր ժամանակի հայ իրականությունը, կյանքի վիճակը և աստիճանը, ու վերջապես, թե ինչը կարող էր ընկալելի և կիրառելի լինել՝ ունենալով համապատասխան լսարան:

Էրզրումեցին, սակայն, ելակետ ընդունեց ոչ թե ժամանակի հայ իրականությունը, այլ այն դրույթը, որ ինչպես Հայոց Ոսկեդարում, այնպես էլ իր ապրած ժամանակում հայ ժողովուրդը պետք է համընթաց գնա համաեվրոպական մտքին: Չսահմանափակվի «Վայ և եղևիկ» սկսվածքով հայ կյանքի թշվառությունը ողբացող գործերով, այլ արծարծի մեծ և հզոր երկրներին հուզող գաղափարները, ընկալի դրանց գեղագիտական-փիլիսոփայական համակարգերն ու գիտական նվաճումների դրույթները, որպեսզի իր հայրենիքը ևս մի օր մաս կազմի այդ ամենին: Նման մոտեցմամբ՝ Խաչատուր վարդապետ Էրզրումեցին իր գրական ժառանգությամբ դարձավ Մխիթարյան տեսիլի մտահայեցողական համարժեքը⁷:

2. Մխիթար Սեբաստացին և Ս. Ղազարի տպարանը

Ս. Ղազարի վանքը եկեղեցիով, միաբանական շենքով և մնացյալ շինություններով կառուցվել է Մխիթարի գծագրով: Շնորհիվ Մխիթարյանների, 18-րդ դարում Վենետիկին մեկ այլ առանձնակի հեղաշրջող դեր ու առաքելություն էր վիճակված նաև հայկական տպագրության գործում:

Վենետիկի տպագրիչները և Ս. Ղազարում հաստատված Մխիթարյան միաբանությունը մի նոր աստիճանի բարձրացրին հայ գրքարվեստը: Սկսած Հակոբ Մեղապարտից մինչև Ոսկան Երևանցի՝ նկատելի էր մի հստակ միտում՝ տպագիր գիրքը հնարավորինս հարազատ ներկայացնել հայ ձեռագրային ավանդույթի շրջանակում, որպեսզի այն խորթ չթվա հայ ընթերցողի աչքին:

Ոսկան վարդապետ Երևանցին և հատկապես՝ Վանանդեցիները, Ամստերդամում աշխատեցին հայ գրքի ընթացքն ուղղել եվրոպական գրատպության մայրուղի: Սակայն հայկականի և ժամանակի եվրոպական ըմբռնումների ու գիտական մեթոդների շրջանակում գործող Մխիթարյանների էր վիճակված հայ գրքի տպագրությունն իրականացնել եվրոպական գրատպության չափանիշներով:

Բնորոշելով Մխիթարի տպագրական գործունեությունը Վենետիկում՝ Հ. Ս. Ճենճեմյանը գրում է. «Մխիթար իսկապէս փոքրիկ Հայաստան մը կը կերտէր՝ օտարութեան ափերուն, օգտագործելով արևմտեան գիտարուես-

⁷ Խաչատուր Էրզրումեցու մասին տե՛ս **Թորոսյան Հ. Յ.**, Գիրք Մխիթարայ արքայի Սեբաստացոյ, էջ 348-359: [Torosyan H. Y., Girk Mxitaray abbayi Sebastacvoy].

տի հզոր ու յառաջադէմ ազդակները՝ ի նպաստ կրօնքին ու Հայրենիքին»⁸:

Գրքերի տպագրության ընդլայնմանը զուգընթաց՝ Մխիթարը հոգ է տանում նաև դրանց տարածման մասին՝ ստեղծելով գրավաճառման մի յուրօրինակ ընդլայնված ցանց՝ Արևելքից Արևմուտք: Վենետիկում տպագրված գրքերը տարածման երկու գլխավոր ուղղություն ունեին՝ Եվրոպական քաղաքները և Կ. Պոլսով դեպի արևմտահայ միջավայր⁹: Գրքերը Ս. Ղազարից բացի վաճառվում էին նաև Վենետիկի Ս. Խաչ հայկական եկեղեցում, ինչպես նաև քաղաքի գրավաճառների մոտ:

Իտալիայի 17–18–րդ դարերի հայկական կենտրոններից էր Լիվոռնոն, ուր գրքերը վաճառել է տեղի հայ հոգևորականը: Գրքերի վաճառքն այստեղ այնպիսի ծավալներ է ընդունում, որ մի փոքր գրատուն է բացվում՝ Ս. Ղազարի հրատարակությունները վաճառելու համար¹⁰:

Հ. Ս. Ճեմձեմյանը Ս. Ղազարի դիվանական մի շարք վավերագրեր է վկայակոչում, որոնցում ներկայացնում է, թե ինչ մեծ թվով գրքեր են ուղարկվել և տարածվել նաև Հռոմում, Լիսաբոնում, Ամստերդամում, Տրանսիլվանիայի Գեռլա և Եղիսաբեթուպոլիս ու Եվրոպական մի շարք այլ քաղաքներում¹¹:

Արևմտահայ միջավայր գրքերն առաքվում էին Կ. Պոլսի միջոցով, ուր ուղարկվել է Մխիթարյանների հրատարակությունների գերակշիռ մասը: Գրքերը նավերով ուղարկվում էին մեծ արկղերով՝ վճարելով փոխադրության ծախսերը: Իրենց հետ գրքեր էին տանում նաև Պոլիս գնացողները: Կ. Պոլսի նավահանգստում գրքերից մեկական օրինակ նայում էր պատրիարքարանի ներկայացուցիչը և թույլատրում, որ գրքերը հանվեն մաքսատնից: Նման թույլտվությունը ցույց է տալիս ն՝ Հովհաննես Կլոտ պատրիարքի հանդուրժողական վերաբերմունքը, և այն, որ Մխիթարյանների հրատարակությունները վիճաբանական բնույթ չունեին: Ավելին, ինչպես գրում է Հ. Ս. Ճեմձեմյանը, պատրիարքարանի ներկայացուցիչը միջնորդել է, որ գրքերը մաքսատնից հանելու համար քիչ մաքս վճարվի¹²:

Գրավաճառությունը Մխիթարի համար նաև մի կենդանի ցուցիչ է եղել, թե ինչ գրքեր և որքան տպաքանակով պետք է տպագրել և որո՞նք է անհրաժեշտ նույնությամբ կամ որոշակի փոփոխություններով վերահրատարակել:

Ժամանակի տպագրական արվեստի շրջանակում առանձին մի բնագավառ էր կազմարարությունը: Կային տպարաններ, որոնք կազմարաններ չունեին, և գրքերի տպագրված մամուլները այս կամ այն կազմատունն էին տանում: Մխիթարյան հրատարակությունները մի նոր աստիճանի բարձրացրին նաև հայ կազմարվեստը՝ ավանդական ձեռագրային դրվագագարդումներից անցում կատարելով Եվրոպական կազմարվեստին՝ միագույն կամ ծաղկավոր ստվարաթղթի վրա դրոշմված ոսկով:

Հայկական ձեռագրերի թերթերի եզրերը սովորաբար գունազարդվում

8 Հ. Ս. Ճեմձեմյան, Մխիթար Աբբահոր հրատարակչական առաքելությունը, էջ 61: [H. S. Ćemĉemyan, Mxitar abbahōr hratarakčakan arakelowtyownə, p. 61].

9 Տե՛ս նույն տեղում, էջ 126: [Օր. cit., p. 126].

10 Տե՛ս նույն տեղում, էջ 126–127: [Օր. cit., p. 126–127].

11 Տե՛ս նույն տեղում, էջ 127–131: [Օր. cit., p. 127–131].

12 Տե՛ս նույն տեղում, էջ 133: [Օր. cit., p. 133].

էին կարմիրով: Մխիթարյան հրատարակություններում ժամանակի ընթացքում տարածվեցին ոսկեգույնը և բրոնզը: Ամենաշքեղը, բնականաբար, կազմվում էր Աստվածաշունչը:

Հայ գրքին Մխիթարի բերած կարևոր նպաստն էր նաև Ս. Ղազարի ձեռագրատան և գրադարանի հիմնումը՝ ժամանակի հայկական ու եվրոպական հրատարակությունների ի մի հավաքմամբ: Մխիթարի և իր աշակերտների միջոցով Ս. Ղազարում հավաքվել է 644 միավոր գիրք, որով դրվել է Մխիթարյան նշանավոր գրադարանի հիմքը: Միաբանության համար նյութական դժվարին պայմաններում նա կառուցում է նաև Ս. Ղազարի գրադարանը, որը կանգուն է մինչև այսօր¹³:

XIX դ. սկզբին, երբ Նապոլեոն Բոնապարտը փակում է իր իշխանության ներքո գտնվող կրոնական միաբանությունները, Մխիթարյանների դիմումագրի հիման վրա, ուր ներկայացվում էր նրանց գիտական գործունեությունը, 1810 թ. օգոստոսի 17-ի հրովարտակով միաբանությունը ճանաչվում է որպես գիտական հաստատություն՝ «Հայկական ակադեմիա», թույլ տալով շարունակել գործունեությունը:

3. Լեզվաբանական ուսումնասիրություններ

Մխիթար Սեբաստացին ու Մխիթարյան միաբանությունը հայագիտական և ընդհանրապես գիտատեսական հարցերի քննությունը կապել են ժամանակի հայ իրականության հետ, բխեցրել ժամանակի հայ կյանքից՝ թե այդ ուսումնասիրությունները միաժամանակ որքանով են ծառայում հայ ժողովրդի ընդհանուր մտավոր մակարդակի բարձրացմանը: Այս տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունեն հայոց լեզվի պատմությանը և քերականությանը վերաբերվող ուսումնասիրությունները և բառարանները: Իսկ Մխիթարյան քերականությունը և բառարանագրությունը սկզբնավորվել են Մխիթարի աշխատանքներով:

Մխիթարը՝ որպես հոգևորական և քարոզիչ, լավ գիտեր ժողովրդի լեզվական իմացության աստիճանը և թե գրաբարը որքանով էր դեռևս պահպանում գրավոր հաղորդակցության իր գործառույթը: Նա կարևորում էր հայերենի քերականության մատչելի մի ձեռնարկի ստեղծումը: Քերականական իմացությունից և այն ըստ հայերենի իրողությունների պարզ և մատչելի ներկայացնելուց առաջ Մխիթարի առջև ծառանում է դժվարին մի խնդիր, որը 5-րդ դարում ծառացել էր Մեսրոպ Մաշտոցի առջև: Հայոց գրերը կոչված էին ծառայելու հայ ժողովրդի ազգային միասնության ամրապնդմանը: Աշխարհագրական և քաղաքական բաժանումների ու մի շարք բարբառների և հատկապես հնչյունական արտաբերումների պայմաններում հնչյունական համակարգի ո՞ր տարբերակին պետք է դիմեր հայոց ուսուցչապետը, որ նորաստեղծ գրերը ծառայեին ազգային միասնությանը ու լեզվական միավորմանը և ոչ թե տարանջատմանը: Մաշտոցը փայլուն ձևով լուծեց այս խնդիրը:

Նույն խնդիրը, թեև այլ դրսևորումներով, ծառացավ 17-րդ դարի կեսերին, երբ սկսեցին ուրվագծվել արևմտահայ ու արևելահայ աշխարհա-

13 Տե՛ս նույն տեղում, էջ 151-153: [Օր. cit., p. 151-153].

բարի երկու ճյուղերը, որոնց կողքին՝ որպես գրավոր և եկեղեցական արարողությունների լեզու, շարունակում էր կիրառվել գրաբարը և վերջինիս աղճատված տարբերակը՝ լատինաբան հայերենը: Գաղթաշխարհը բարբառային խայտաբղետ մի շերտ էր կազմում, որին գումարվում էին ղփչաղախոսները Ղրիմում, Ուկրաինայում, Լեհաստանում և Հունգարիայում, իսկ արևմտահայ միջավայրում դարձյալ որոշակի թիվ էին կազմում թուրքախոս հայերը:

Մխիթարյան միաբանությունը սերում էր արևմտահայ միջավայրից, և նրա գործունեության առաջին կենտրոնը Պոլիսն էր: Այս պայմաններում գործնական ընթերցանության և ժողովրդին ոչ միայն մտավոր-իմաստային, այլև լեզվական առումով մատչելի գործեր տալու համար հարկավոր էր դրանք շարադրել արևմտահայ աշխարհաբարով, ինչպես նաև կազմել արևմտահայ աշխարհաբարի քերականություն, որպեսզի ժողովրդի առավել մեծ զանգվածներ կարդալ սովորեին և քերականական ճիշտ ձևերի յուրացմամբ՝ կարողանային հասկանալ իրենց կարդացածի իմաստը:

16-17-րդ դարերում մայրենի լեզուն կորցրած հայերի շրջանում մեծ տարածում էր գտել հայատառ թուրքերենով ստեղծված գրականությունը: Հայերեն տառերով թուրքերեն գրող հայերի համար Մխիթարը 1722 թ. գրում է աշխարհաբարի քերականություն՝ «Դուռն քերականութան»:

Մխիթարը 1730 թ. հրատարակում է «Քերականութիւն գրաբարի լեզուի», որը նոր շրջանի քերականագիտական ըմբռումներով գրված հայերենի քերականության առաջին ձեռնարկն էր: Այն սկիզբը լինելով նոր շրջանում գրաբարին նվիրված ուսումնասիրությունների՝ գործնական առումով կրկնակի էր կարևորվում: Նախ, որովհետև գրաբարը դեռևս պահպանում էր իր դիրքերը որպես գրական լեզու, և հարկավոր էր գրաբարի մի նոր ձեռնարկ, որը հայերենը կմաքրեր լատինաբան աղճատումներից: Նման աշխատանքը մեծ դժվարություն չէր ներկայացնում գրաբարի նրբություններին քաջածանոթ Մխիթարի համար: Այն դժբախտաբար քերականական հարց լինելուց ավելի դարձել էր դավանական հարց: Գրաբարի դասական ձևերին վերադարձը ընկալվում էր որպես հրաժարում կաթոլիկ դավանությունից:

Մխիթարը Հռոմի առջև քանիցս ամբաստանվել է որպես հերձվածող: Այս պայմաններում վճռական քայլերի փոխարեն նա ընտրում է միջին մի գիծ՝ գրաբարը մաքրել ակնհայտ լատինաբանություններից և ցույց տալ այն ճանապարհը, որով ընթանալու էր գրաբարը որպես նոր շրջանի գրական լեզու: Վերլուծվում և կանոնակարգված (նորմավորված) ներկայացվում են գրաբարի ձևաբանությունը և շարահյուսությունը: Ժամանակի բարբառային բազմաձևությունների պայմաններում, որոնք ուղղագրական և հնչյունաբանական դժվարություններ էին առաջ բերում, Մխիթարը հատուկ բաժիններ է նվիրել ուղղագրությանը, հնչյունաբանությանը և առոգանությանը: Հեղինակ է նաև աշխարհաբարի քերականությանը նվիրված ծավալուն աշխատանքի, որն անտիպ է մնացել:

Մխիթարյանների և ընդհանրապես 18-րդ դարի հայ քերականագիտության հանրագումարը դարձավ կրոնադավանական շատ ավելի հանդուրժողական պայմաններում՝ 1779 թ. Միքայել Չամչյանի տպագրած «Քե-

րականություն հայկազեան լեզուի» աշխատանքը, որը գրաբարի քերականությունը վերջնականապես ազատեց լատինաբանության կապանքներից:

4. Բառարանագրություն

Մխիթարյան բառարանագրությունը ևս սկզբնավորվել է Մխիթար Աբբահորից, որը հեղինակն է «Բառգիրք հայկազեան լեզուի» (հատ. 1-ին, 1749 թ., 1273 էջ, հատ. 2-րդ, 1769 թ., 1770 էջ) կոթողային աշխատանքի: Սրբագրական վերջին աշխատանքները կատարել է մահվան մահձում: Առաջին հատորն ունի 37.000 բառահոդված: Երկու հատորները միասին՝ 100.000: Օգտագործվել են այդ ժամանակ տպագրված հայերեն բոլոր գրքերի, ինչպես նաև Մխիթարյաններին ծանոթ եղած հայկական բոլոր ձեռագրերի բառերը: Թուրքախոս հայերի համար բառերի դիմաց տրված են թուրքերեն թարգմանությունները: Բերվում են նաև բառերի հունարեն և լատիներեն համարժեքները:

Այս բառարանի կազմման աշխատանքները և տպագրության ընթացքը Մխիթար Սեբաստացուն ուղեկցել են պատանեկության տարիներից մինչև կյանքի ավարտը:

Գրքի առաջաբանում ասվում է, որ բառարանի կազմմանը Մխիթարը ձեռնամուխ է լինում 1727 թ. և հասնելով «երախայրի» բառին՝ 1728 թ., հարկադրված լինելով զբաղվել այլ գործերով՝ բառարանի վրա կրկին սկսում է աշխատել 1742 թվականից և ավարտում է 1745 թ.:

Բառարան կազմելու առաջին դժվարությունն առաջաբանում համարվում է այն, որ կազմողը պետք է բազմակողմանի գիտելիքներ ունենա: Տարբեր գիտությունների ներկայացուցիչները գիտեն իրենց բնագավառին վերաբերող բառերը, այնինչ բառարանագիրը պետք է իմանա բոլոր բնագավառների և գիտությունների բառերը և կարողանա ճշտորեն բացատրել դրանց իմաստը:

Հաջորդ դժվարությունը հայերեն բառարանների և հատկապես բացատրական բառարանների պակասն էր: Մինչ այդ եղած քիչ թե շատ ընդարձակ բառարանը Լիվոռնոյում 1698 թ. տպագրված Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ն էր, որի հետ կապված երեք գլխավոր թերություն են նշում «Հայկազյանը» կազմողները: Առաջին՝ բառացանկն աղքատ էր, և հայերենում եղած ամեն տասը բառից հազիվ մեկն էր պարունակում: Երկրորդ՝ բառերի բացատրությունները հաջող չէին, և բառի բացատրությունը երբեմն ավելի խրթին էր, քան բացատրվելիք բառն ինքը: Երրորդ՝ Մեղրեցու բառարանը հետագա ընդօրինակությունների ժամանակ շատ էր աղճատվել գրիչների կողմից:

Մխիթարը, սակայն, գիտակցում էր, որ եթե կենդանի խոսակցական լեզվի բառերը տեղ չգտնեն, բառարանը գործնական կիրառություն չի կարող ունենալ ո՛չ հայ ընթերցողների և ո՛չ էլ այն օգտագործողների համար, ովքեր բառարանի միջոցով պետք է հայերեն սովորեին:

Առանձին բարդություն էր ներկայացնում բառերի բացատրությունների՝ գրաբար, թե՛ աշխարհաբար գրելը: Գործնական առումով ավելի ձիշտ կլիներ, որ բացատրություններն աշխարհաբար լինեին: Այդ դեպքում, սա-

կայն, պետք էր հաշվի առնել երկու հանգամանք: Առաջին՝ աշխարհաբարը լիովին չէր կազմավորվել որպես գրական լեզու, ուստի նրանով դժվար կլինեք արտահայտել բառիմաստների բացատրությունները: Երկրորդ՝ չկար միասնական աշխարհաբար, և առաջաբանի հեղինակների բնորոշմամբ, ամեն գավառում մի լեզվով էին խոսում, որը հասկանալի չէր մյուս տեղերում, ուստի հնարավոր չէր ընտրել աշխարհաբարի համահայկական աստիճանի հասած մի որևէ տարբերակ: Այս պայմաններում որպես ազգային միավորող գործոն՝ հանդես էր գալիս գրաբարը: Լատինաբան հայերենի դեմ մղված պայքարում գրաբարը նաև միջոց էր գրական աշխարհաբարի հաստատման համար, ուստի Մխիթարը նախընտրում է բառերի բացատրությունները և քերականական ձևերը ներկայացնել գրաբարով:

Բառահոդվածները կազմված են հետևյալ սկզբունքով. նախ բերվում է գլխաբառը, ապա քերականական հատկանիշը, թե խոսքի ինչ մաս է և ինչ հոլովման ու խոնարհման է ենթարկվում: Բառերի բացատրության մեջ տրվում են բոլոր բառիմաստները և դրանք ներկայացնող վկայությունները:

Աստվածաշնչի և «Բառգրքի» առաջաբանների խոսքերը խտացումն են Մխիթարյան առաքելության և բացատրությունը Մխիթարյան նվիրումի, որը շարունակվելու էր Մեծն Սեբաստացու երկրային կյանքի ավարտից հետո ևս՝ Մխիթարյան հաջորդող սերունդներով:

Նոր ձեռագրեր ձեռք բերելուց հետո Մխիթարյանները շուրջ 50 տարվա ընթացքում Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմեյանի և Մկրտիչ Ավգերյանի աշխատասիրությամբ իրականացնում են բառարանի երկրորդ հրատարակությունը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հատ. 1-ին, Վենետիկ, 1836 թ., հատ. 2-րդ, 1837 թ.):

Որպես «Հայկազեան բառարանի» կրճատված տարբերակ նախ 1846 թ., ապա և 1865 թ., Մխիթարյանները հրատարակում են «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» բառարանը: Այն թեև ինչպես վերնագիրն է հուշում, գործնական, առձեռն օգտագործման համար էր, սակայն ժամանակի ընթացքում ի հայտ եկած միջնադարյան նոր բնագրերի շնորհիվ «Հայկազեան բառարանից» 5000 ավելի բառ ունի:

5. Կրոնամեկնաբանական գործեր

Մխիթարյանների կրոնական թեմաներով թարգմանությունները վերաբերվում են Աստվածաշնչի մեկնությանը, հոգևոր առաքինություններին ու մեղքերին, ընդհանուր քրիստոնեական դաստիարակությանը, այլ ոչ թե ժամանակի դավանաբանական և միջեկեղեցական վեճերին: Բնորոշ օրինակներ են Մխիթար Աբբահոր կողմից Ալբերտ Մեծի «Աստուածաբանութեան» համառոտ տարբերակի (1715 թ.), Պետրոս Արագոնացու «Գիրք մուլութեանց» (Վենետիկ, 1720 թ.) և «Գիրք առաքինութեանց» (1721 թ.) թարգմանությունները:

Եթե հաշվի առնենք բարբերի այն անկումը, որի մասին գրում էին 17-19-րդ դարի հայ հեղինակները՝ Առաքել Դավրիժեցուց մինչև Հակոբ Պարոնյան և հայ գավառագիրներ, ապա կարող ենք ասել, որ իրենց բարոյական ուղղվածությամբ նման հրատարակությունները նպաստել են բա-

րոյական չափանիշների անկման դեմ պայքարին, որով թեև անուղղակիորեն, բայց այնուամենայնիվ սատարել են նույնիսկ ազգային խնդիրների իրականացման գործին:

Կրոնաբարոյական թեմաներով թարգմանությունների հրատարակությունները հիմնականում կատարվել են 18-րդ դարում, երբ միաբանության գործունեությունը դեռևս շեշտված հայագիտական ուղղվածություն չէր ստացել: Հաջորդող շրջանում գերակշռում են միջնադարյան մեկնությունների հրատարակությունները, որոնք կարևորվում էին հատկապես միջնադարյան բնագրերի տպագրության տեսանկյունից:

6. Մեկնաբանական գրականություն

Աստվածաշնչի գրքերի մեկնությունների մխիթարյան հրատարակությունները բաժանվում են 3 խմբի.

ա. Աստվածաշնչի գրքերի միջնադարյան հայ մեկնություններ.

բ. Միջնադարյան թարգմանական մեկնությունների, ինչպես օրինակ Եփրեմ Ասորու և Հովհան Ոսկեբերանի Հին և Նոր Կտակարանների մեկնություններ.

գ. Նոր շրջանի հեղինակային մեկնություններ:

Հեղինակային մեկնությունները սկզբնավորվում են Մխիթար Աբբահոր հեղինակած «Մեկնութիւն գրոց Ժողովողին» (1736 թ., 453 էջ) և «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի» (1737 թ.) գործերով: Դրանցում միջնադարյան ավանդույթի հետևողությամբ ամեն գլխի սկզբում նախ ներկայացվում է տվյալ գլխի պարունակած իմաստը և հոգևոր խորհուրդը, ապա գլուխներից յուրաքանչյուրը բացատրվում է տող առ տող և բառ առ բառ: Նույն այս սկզբունքով այնուհետև Միքայել Չամչյանը 10 հատորով (1813–1823 թթ.) հրատարակեց Դավթի Սաղմոսների, իսկ Գաբրիել Ավետիքյանը 3 մեծադիր հատորներով (1806–1812 թթ.) Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունները:

Այս մեկնություններում զուգակցվել են հայրաբանական (պատրիստիկա) ավանդույթը՝ մեկնաբանվող հատվածի համար միջնադարյան հեղինակներից բերված համապատասխան տողերը և նոր շրջանի կաթոլիկ աստվածաբանների բացատրությունները:

7. Աստվածաշնչի հրատարակությունը

Մխիթարի գլխավորությամբ՝ Մխիթարյանները 1733 թ. իրականացնում են Աստվածաշնչի երկրորդ հրատարակությունը՝ Ոսկան վարդապետ Երևանցու 1666 թ. Ամստերդամում կատարած հրատարակությունից հետո: Պետրոս Լատինացու 1705–1707 թթ. Կ. Պոլսում կատարած տպագրությունը չի կարելի համարել երկրորդ հրատարակություն, քանի որ այն տառացի արտատպությունն է Ոսկան վարդապետի հրատարակության:

Աստվածաշնչի հայկական բնագրին և կանոնին հավատարիմ մնալու, ինչպես նաև հայկական թարգմանությունը դարերի ընթացքում կատարված ընդօրինակությունների ժամանակ առաջ եկած աղճատումներից և սխալներից մաքրելու համար օգտագործվել են նաև Աստվածաշնչի հայ-

կական միջնադարյան մեկնությունները, ինչպես նաև հայերեն թարգմանության բնագիրը համեմատվել է Աստվածաշնչի Փարիզում 1645 թ. 7 լեզվով կատարված թարգմանության հետ:

Աստվածաշնչի 1733 թ. հրատարակությունն առանձնանում է ոչ միայն ճշտված բնագրով, այլև տպագրական արվեստով անգերազանցելի է մնացել Աստվածաշնչի հայերեն տպագրության բոլոր հրատարակությունների շարքում: Գիրքն ունի 156 փորագրապատկեր, որոնց մի մասը Վենետիկում վերստին փորագրվել է Ոսկան վարդապետի հրատարակության պատկերների հետևողությամբ:

Աստվածաշնչի ձեռագիր օրինակներից անցումը տպագրին թե՛ Ոսկանի և թե՛ Մխիթար Աբբահոր ժամանակ ենթադրում էր տպագրական նոր սկզբունքների մշակում և այնպիսի մի բնագիր, որը, համապատասխանելով Աստվածաշնչի հայկական կանոնին, միաժամանակ համահունչ լիներ Լատին եկեղեցական հրատարակություններին:

Աստվածաշնչի գրեթե ամեն մի գրքի սկզբում տվյալ գրքի բովանդակությունը և խորհուրդները խտացնող մի փորագրանկար է, քանի որ պատկերների տպագրությունը զուտ ձևավորման և գեղեցիկ նկարագրման հարց չէր, այլ մեկնաբանական մի ողջ ծրագիր, ուստի վստահաբար կարելի է ասել, որ համապատասխան թեմաներով նկարների ընտրությունը և գրքում դրանց տեղադրումը կատարել է Մխիթար Աբբահայրը: Նա է եղել նաև հեղինակն այն նկարների պատկերագրական հորինվածքի կազմման, որոնք չկան Ոսկանի հրատարակած Աստվածաշնչում:

Ոսկան վարդապետը և Մխիթար Սեբաստացին ջանք չլինայեցին իրականացնելու այնպիսի հրատարակություններ, որոնք մի աստիճանի վրա էին գտնվում ժամանակի եվրոպական գրատպության և Աստվածաշնչի հրատարակությունների հետ՝ հավաստելով այն իրողությանը, որ չնայած քաղաքական դժբախտ պայմաններին և հայ հայրենիքում տիրող ծանր վիճակին՝ հայ ժողովուրդը շարունակում էր համաքայլ ընթանալ ստեղծվող համաեվրոպական արժեքներին:

Մեծ խորհուրդ կա այն իրողության մեջ, որ ինչպես Թարգմանչաց շարժման պսակը դարձավ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, այնպես էլ հայ հնատիպ գրքի երկու բարձրակետերը դարձան Աստվածաշնչի 1666 թ. Ամստերդամի և 1733 թ. Վենետիկի հրատարակությունները: Ինչպես որ Ոսկանյան Աստվածաշունչը գերազանցեց մինչ այդ եղած հրատարակություններին, այնպես էլ Աբբահոր Աստվածաշունչը գերազանցեց նախորդ բոլոր հրատարակությունները և անգերազանցելի մնաց հայ հնատիպ գրքի շուրջ երեքհարյուրամյա պատմության ընթացքում:

Մխիթարյանների հրատարակություններով հայկական տպագրության՝ եվրոպական աստիճանի բարձրանալու մասին Լեոն գրում է. «Առհասարակ, «Աբբայի Աստվածաշնչի» տպագրության պատմությունը վկայում է, որ Մխիթարը և նրա աշակերտները սովորել են եվրոպացու պես աշխատել: Ս. Ղազարի վանքը պատկառելի, ակադեմիական հրատարակություններ անելու ընդունակությունն էր ստանում: Ահա, ամենից առաջ, Մխիթարյանների գերազանց հատկությունը, որին մեզանում դեռ ուրիշ ոչ

մի հիմնարկություն չէ հասել: Միաբանությունը հայ ազգի մեջ ամենաբարձր, առաջնակարգ տեղ էր գրավում նախ և առաջ իբրև հրատարակիչ»¹⁴:

Ըստ հայկական կանոնի՝ Աստվածաշնչի գիտա-քննական բնագրի ավելի ճշտված հրատարակությունը Մխիթարյան հայրերից իրականացրին Ը. Ը. Զոհրայանը 1804 թ. Փարիզում և ապա Ը. Արսեն Բագրատունին 1861 թ. Վենետիկում:

8. Պատմական և աշխարհագրական գիտություններ

Հայոց պատմությունը գիտականորեն տարբերակված բաժանմամբ և մինչև 1780-ական թվականները հասնող ժամանակագրությամբ առաջինը գրեց Միքայել Չամչյանը՝ «Պատմութիւն Հայոց» (հատ. 1-3, 1784-1786 թթ.), ուր հայ ժողովրդի սկզբնավորումը և պատմությունը բխեցվում է Նոյի որդիներից Հաբեթից:

Չամչյանը պատմագիտական որոշակի ձևի մեջ դրեց հայ միջնադարյան պատմագրությունից եկող այն ըմբռնումը, որ Դրախտը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և ըստ այդմ կյանքը սկզբնավորվել, ապա և ջրհեղեղից հետո նորոգվել է Հայաստանում, իսկ մարդկության նախալեզուն հայերենն է եղել: «Դրախտ Հայաստանի» անվանումը ստացած այս ըմբռնումը այնուհետև նորանոր փաստերով համալրեցին և հիմնավորել փորձեցին Մխիթարյան հաջորդող հայրերը՝ Ղուկաս Ինձիճյանից մինչև Ղևոնդ Ալիշան:

Չամչյանով նշանավորվեց հայ միջնադարյան պատմագրությունից անցումը դեպ նոր շրջանի պատմագիտությունը:

Համաշխարհային պատմությունն ըստ եվրոպական պատմագրության 8 հատորով գրել է Ղուկաս Ինձիճյանը՝ «Դարապատում» (1824-1828 թթ.):

Մխիթարյանների մոտ պատմագիտությունը հանդես էր գալիս պատմական աշխարհագրության հետ միահյուսված: Միջնադարյան հայկական աշխարհագրական գործերում ընդունված բաժանմամբ՝ մանրակրկիտ նկարագրությամբ և պատմական մանրամասն շարադրանքով ներկայացվում են պատմական Հայաստանի նահանգները՝ Ղուկաս Ինձիճյանի «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» 1-3 հատորներում (1822 թ.): Ինձիճյանը Ս. Ազոնցի հետ հեղինակել է նաև «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» 11 հատորով (1802-1808 թթ.):

Հին Հայաստանի պատմության, աշխարհագրության և կյանքի տարբեր բնագավառների մասին միջնադարյան գրականության վկայությունների հիման վրա Ինձիճյանը 3 մեծադիր հատորներով գրել է «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» (հատ. 1-3, 1835 թ.): Առանձին ծավալուն բաժիններով ներկայացված են հին Հայաստանի կենցաղը, կյանքի տարբեր բնագավառները, գիտությունը, արվեստը, կրոնը և այլն: Չամչյանից եկող պատմահայեցողությամբ հայոց լեզվի մասին նա գրում է, որ աշտարակաշինությունից սկսած հայերենը մեզ է հասել նույն ձևով, որով խոսել է նաև Նոյը. «Լեզու Հայաստանեայց յաշտարակաշինութենէ

14 Լևո, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 418: [Leo, Erkeri žoǵovacow, hat. 5, p. 418].

անտի անխառն առ մեզ իցէ հասեալ յառաջ քան զջրհեղեղն, որով խօսէր Նոյ»¹⁵:

Հայաստանի տարբեր նահանգները ներկայացնող պատմաաշխարհագրական գործերի բարձրակետը դարձան Ղևոնդ Ալիշանի տեղագրական 4 հատորները՝ «Շիրակ» (1881 թ.), «Միսուան» (1885 թ.), «Այրարատ» (1890 թ.) և «Միսական» (1893 թ.), որոնց մասին Ավետիք Իսահակյանը գրում է. «Առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա դարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը, տեսավ տարածություններով հեռու վայրեր, այցելեց Հայաստանի ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հողի կտորը, շնչավորեց ավերակները, գգվեց, հիացավ նրանցով: Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական»¹⁶:

9. Հայ հին և միջնադարյան բնագրերի հրատարակությունը

Հայ հին գրականության Մխիթարյանների հրատարակությունները իրականացվեցին երեք մատենաշարերով:

Առաջին՝ «Մատենագրութիւնք նախնեաց» շարքով տպագրվեցին հայ միջնադարյան մատենագրության գրեթե բոլոր կոթողային գործերը՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունները (1827 թ.), Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» (1832 թ.), Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարությունը» (1832 թ.), Դավիթ Անհաղթի փիլիսոփայական գործերը (1833 թ.), Եղիշեի (1838 թ.) և Մովսես Խորենացու (1843 թ.) ստեղծագործությունները, որոնք հրատարակվեցին բնագրային ձգբրտումներով և տարընթերցվածներով, առաջաբանով ու ծանոթագրություններով:

Երկրորդ՝ «Ընտիր մատենագիրք» շարքով տպագրվեցին պատմագեղարվեստական ավելի մեծ արժեք ունեցող ստեղծագործությունները՝ նախատեսված ընթերցողների առավել լայն շրջանակի համար:

Երրորդ՝ «Սովերք հայկականք» (Սովերք գրաբարում նշանակում է փոքր մատյան) շարքով Ղևոնդ Ալիշանը 1853–1861 թթ. հրատարակեց 22 գրքույկ, որոնցում տեղ գտան հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու պատմության նշանակալից իրադարձություններին նվիրված մատենագրական ոչ մեծ ծավալի ու պարզ շարադրանքով և մինչ այդ անտիպ մնացած ստեղծագործությունները:

Տարբեր լեզուներով թարգմանվեցին հայ միջնադարյան գրականության այն երկերը, որոնք ունեին ընդհանուր քրիստոնեական նշանակություն կամ պատմական կարևոր սկզբնաղբյուր էին տարբեր երկրների պատմության համար:

Երկայուն՝ գրաբար և զուգահեռ լատիներեն թարգմանությամբ հրատարակվեցին անտիկ և քրիստոնեական շրջանի այն հեղինակների գործերը, որոնց միայն հայերեն թարգմանություններն էին պահպանվել:

15 Հ. Ղ. Ինձիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. 3-րդ, Վենետիկ, 1835: [H. G. Inčičean, Hnaxosowt'wn ašxarhagrakan Hayastaneayc ašxarhi, hat. 3-rd, Venetik, 1835].

16 Ալիշանը ժամանակակիցների հուշերում, կազմեց Ս. Շտիկյանը, Եր., 1974, էջ 220: [Ališano žamanakacikeri howšerowm, kazm. S. Štikyan, Er., 1974]

10. Վիեննայի Մխիթարյան միաբանությունը

Միաբանության մի խումբ անդամներ տարածայնությունների պատճառով թողնելով Վենետիկը գնում են նախ Տրիեստ (1773 թ.), ապա 1810 թ. հաստատվում Վիեննայում:

Ավստրիական կառավարությունը 1811 թ. հունիսի 8-ին պաշտոնապես ճանաչում է միաբանությունը: Մխիթարյանների վիեննական ճյուղը ևս կարճ ժամանակում մեծ ճանաչում է ձեռք բերում հայագիտության և հասկապես հայոց լեզվի պատմության, հայ պատմագրության և դրամագիտության ուսումնասիրման բնագավառներում:

Վիեննայի միաբանության ձեռագրատանը պահվում են 2600 հայկական ձեռագրեր, 120 հազար գիրք հայերեն և օտար լեզուներով: Ունի հայ մանուկի հարուստ հավաքածու, ինչպես նաև թանգարան, որը հայտնի է դրամների և եկեղեցական իրերի հարուստ հավաքածուով:

Վիեննայի Մխիթարյանների տպարանը հիմնվել է 1811-1812 թթ., ուր գրքեր են տպագրվել 50 լեզուներով:

Ա. Չոպանյանն այսպես է բնորոշում Մխիթարյան զույգ միաբանությունների գործունեությունը. «Հնարարոր կը դառնար հայացումը Երոպայի երկու գլխավոր մշակոյթներուն՝ իտալական և գերմանական: Շնորհիւ այդ բաժանումին՝ հայ միտքը բեղմնատրուեցաւ իտալական գեղագիտութեամբ և գերմանական քննադատութեամբ»¹⁷:

11. Մխիթարյանների պարբերականները

Մխիթարյան միաբանության պարբերական մամուլը սկզբնավորվում է հայկական լրագրության առաջնեկին՝ «Ազդարարին» (1794 թ. Մադրաս) գրեթե զուգահեռ՝ 1800-1820 թթ. լույս տեսած «Տարեգրութիւն» անվանումը կրող տարեգրքերով, որոնց խմբագիրը, ավելի ձիշտ հեղինակն էր Հ. Ղ. Ինձիճյանը: Նա «Դարապատումի» 8 հատորներում մինչև այդ, ինչպես ասացինք, ներկայացրել էր համաշխարհային պատմությունը: Նույն ձևով «Տարեգրութեան» առաջին երկու հատորներում համապատասխանաբար ներկայացնում է, թե ինչ նշանակալից իրադարձություններ են տեղի ունեցել 1799 թ. և 1800 թ.: «Տարեգրութեան» ուղղվածության և նպատակների մասին առաջին տարվա տարեգրքի տիտղոսաթերթում ասվում է. «Յիշատակարան երևելի անցից դիպեցելոց յաշխարհի ի սոյն ամի, կարգեալ ըստ աուրց իւրաքանչիւր ամսոյ, յորում դիպան»: Հետևաբար, այն ըստ կյանքի տարբեր բնագավառների ներկայացնում է Եվրոպայում ամեն տարի տեղի ունեցած դեպքերի ժամանակագրությունը:

1803 թ. լույս է տեսնում «Տարեգրութեան» երեք համար, որով այն ամսագրային որոշակի հատկանիշներ է ձեռք բերում՝ ներկայացնելով ժամանակային ավելի փոքր կտրվածք:

1804 թ. «Տարեգրութեանը» զուգահեռ սկսում է լույս տեսնել «Եղանակ Բիւզանդեան»-ը, որը տպագրվում է մինչև 1820 թ.: Խմբագիրը դարձյալ Հ. Ղ. Ինձիճյանն էր: Ինչպես վերնագիրն է հուշում, այն վերաբերվում էր

17 Չոպանեան Ա., Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 51: [Čöpanean A., Dêmkêr, Pariz, 1924].

Բյուզանդիոնի՝ Կ. Պոլսի և շրջակա բնակավայրերի եղանակին, գյուղատնտեսությանը և կյանքի տարբեր բնագավառներին՝ դիտարկված օդերևութաբանական գուշակությունների տեսանկյունից:

1809 թ. այն անվանվում է «Եղանակ Բիւզանդեան բազմավէպ»: Գլխագրի հավելումը ցույց է տալիս նաև բովանդակային ընդգրկման հավելումը՝ թեմատիկ նոր բաժիններով: Վերնագրում ավելացված «Բազմավէպ» անվանումը՝ որպես բազում բաներ վիպող, այնուհետև փոխանցվելու էր Մխիթարյանների և ընդհանրապես հայ մամուլի ամենատեսական ու չգերազանցված պարբերականին՝ «Բազմավէպին»: Ընդ որում ավելացված նոր խորագրերը՝ «Սկզբունք բարոյականք», «Բժշկականք», «Գիւտք», այնուհետև տեղ են գտնում «Բազմավէպում»:

Մխիթարյանների պարբերականների՝ տարեգրքից դեպ լրագրության անցումն ավարտվում է «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթով (1808–1816 թթ.), ապա և շաբաթաթերթով: Այն հրատարակվում էր Կ. Պոլսի «Արշարունեաց» ընկերության կողմից: Հաջորդաբար խմբագիրներն են դառնում Հ. Մատթթիա Փյուսկույանը, Հ. Գրիգոր Գապարաճյանը և Հ. Մանուել Զախջախյանը:

Այս երեք պարբերականներում արտացոլվել է նաև արևմտյան գրական աշխարհաբարի Մխիթարյանների կողմից կանոնակարգման ընթացքը:

12. «Բազմավէպ» ամսագիրը

Վենետիկի Մխիթարյանները 1843 թվականից հրատարակում են «Բազմավէպ» բազում բաներ վիպող, պատմող ամսագիրը, որի հիմնադիր խմբագիրն է եղել մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը՝ Գաբրիել եպս. Այվազովսկին:

Ամսագիրը սկզբնապես հանրագիտակ բնույթ ուներ: Միաբանության կրթամշակութային ծրագրերին համահունչ տպագրվել են տարբեր նյութեր նվիրված եվրոպական գիտության նվաճումներին: Մեծ տեղ է հատկացվել բնական գիտություններին: Ներկայացվել է տարբեր երկրների պատմությունն ու մշակույթը և այդ երկրների քաղաքական համակարգը:

Ամսագրում աստիճանաբար սկսում են գերակշռել հայագիտությանը նվիրված նյութերը՝ տեսական բնույթի հոդվածներ և միջնադարյան բնագրերի, հատկապես ժողովրդական ակունքներ ունեցող բնասատեղծությունների հրատարակությունները: Ամսագրի տարածմանը նպաստել են տպագրված նյութերին համահունչ գեղեցիկ փորագրանկարները:

«Բազմավէպը» հայ մամուլի առանց ընդհատման մինչև այսօր լույս տեսնող ամենահին պարբերականն է և դարձյալ առանց ընդհատման լույս տեսնող՝ հնությանը չորրորդ պարբերականն Իտալիայում:

Վիեննայի մխիթարյանները 1887 թ. սկսում են հրատարակել «Հանդէս Ամսօրեա»-ն, որը ևս առանց ընդհատման լույս է տեսնում մինչև այսօր: Առաջին տարիներին այն ևս հանրագիտակ ընդգրկում է ունեցել և տպագրել զանազան նյութեր տարբեր խորագրերի ներքո, սակայն 1890-ական թվականների կեսերից ստացել է շեշտված հայագիտական ուղղվածություն:

13. Մխիթարյանների գրական ստեղծագործությունները

Մխիթարյանների գրական գործունեությունը սկսվել է եկեղեցական տոների համար գրվող և այդ տոների օրերին բեմադրվող պիեսներով, որոնցով դրվել է նոր շրջանի հայ թատրոնի հիմքը: Մխիթարյանների գեղարվեստական գործերը հիմնականում չափածո են: Մխիթարյան պոեզիայի հիմնադիրը ևս Մխիթար Սեբաստացին է, ով միջնադարյան հայ վանական բանաստեղծությունից անցում կատարեց դեպ եվրոպական կլասիցիստական բանաստեղծությունը: Մխիթարը պատանեկության տարիներին գրում է 33 բանաստեղծություններ, որոնք լույս են տեսնում 1727 թ.:

Կլասիցիզմի հետևողությամբ Մխիթարյանները գրում են բարդ և արհեստական գրաբարով, ծանր տաղաչափությամբ, կրոնական և պատմական թեմաներով: Նրանց ստեղծագործությունների ընտրանին լույս է տեսել 3 հատորով «Տաղք Մխիթարեան վարդապետաց» խորագրով (1852–1854 թթ.):

Մխիթարյան կլասիցիստական բանաստեղծության բարձրակետը դարձավ Արսեն Բագրատունու Հայկ Նահապետին նվիրված «Հայկ դիւցազն» պոեմը:

19-րդ դարի կեսերից Մխիթարյան գրականության մեջ սկսում է գերիշխել ժողովրդական ուղղությունը: Այն սկզբնավորվում է Ղևոնդ Ալիշանի՝ «Բազմավեպ» ամսագրում 1847–1858 թթ. տպագրված «Նահապետի երգերը» շարքով: Շոտլանդացի բանաստեղծ Ջոն Մակֆերսոնն 1760-ական թվականներին իր ստեղծագործությունները տպագրեց որպես շոտլանդացի ծեր ռազմիկ և կույր բարդ Օսսեանի բանաստեղծություններ, որոնք գրավեցին ողջ Եվրոպան՝ առաջ բերելով Օսսեանական գրական շարժումը¹⁸: Վերջինիս հետևողությամբ Ալիշանը «Նահապետի երգերը» տպագրում է որպես 17-րդ դարում ապրած ծեր հայ բանաստեղծի՝ Նահապետի ստեղծագործություններ:

Մխիթարյանների շնորհիվ գրաբար ու արևմտահայերեն թարգմանվեցին նաև եվրոպական գրականության մեծ թվով ստեղծագործություններ, այդ թվում Միլտոնի «Դրախտ կորուսյալը» (1824 թ.), Բայրոնի գործերը (1852 թ.), Լաֆոնտենի Առակները, Տաստյի «Ազատագրված Երուսաղեմը» (1921 թ.):

18 Տե՛ս **Макферсон Джеймс**, Поэмы Оссiana, издание подготовил **Ю. Д. Левин**, Ленинград, 1983, с. 492–496. [**Makferson Djeyms**, Poemy Ossiana, izdanie podgotovil **Yu. D. Levin**, Leningrad, 1983].

Անփոփում

Ս. Ղազարի միաբանությունն իր գործունեությամբ արժանանում է համընդհանուր ճանաչման: Գիտական համագործակցություն է հաստատվում եվրոպական երկրների ակադեմիաների հետ, որոնց պատվավոր անդամ էին միաբանության մի շարք անդամներ և հատկապես Ղևոնդ Ալիշանը՝ 19-րդ դարի վերջում:

Հայերեն սովորելու և հայագիտությամբ զբաղվելու համար Ս. Ղազար էին գալիս եվրոպական ճանաչված գիտնականներ և մտավորականներ, այդ թվում՝ Բայրոնը և Ստենդալը:

19-րդ դարի կեսից սկսած Ս. Ղազարը ձեռք է բերում մի նոր և անչափ կարևոր գործառույթ: Եթե մինչև այդ նա եվրոպական գրականության, գիտության և ընդհանրապես ժամանակի հասարակական-քաղաքական մտքի տարածողն էր հայ իրականության մեջ, ապա այժմ արդեն Հայաստանն է ներկայացնում եվրոպային, և Մխիթարյաններն իրավամբ դառնում են հայ մշակույթի դեսպանները՝ փոքրիկ մի Հայաստան ստեղծելով Ս. Ղազարում:

Ս. Ղազար այցելած հայ մտավորականների ուղեգրություններում արժևորվել է ոչ միայն միաբանության գիտա-գրական ժառանգությունը, այլև անարյուն զոհաբերության հասնող այն նվիրումը, որով նրանք իրենց կյանքը ի սպաս են դրել վանքի պատերից ներս եվրոպայում հայկական նման կոզյակ ստեղծելուն:

Հիացական տողեր են գրել նաև օտար ուղեգիրները և հյուրերը: Թեև միանգամայն այլ մեկնաբանությամբ ու զգացողությամբ, սակայն խորհրդանշական է հետևյալ օրինակը: 1898 թվականին Վենետիկ եկած իշխան Պոբեդոնոսցևը, որը սևհարյուրակային շարժման գաղափարախոսներից էր, երբ ծանոթանում է Ս. Ղազարի Մատենադարանին, թանգարանին, տպարանի աշխատանքներին և միաբանության ընդհանուր գիտա-գրական գործունեությանը, միաբանական սեղանատանն իր պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ չկարողանալով զսպել չարությունն, ասում է, թե այս գեղեցիկ քաղաքում և երկրում ինչու եք զուր տեղը մաշում ձեր կյանքը, չէ՛ որ հայությունը Թուրքիայում դատապարտված է բնաջնջման, իսկ Ռուսաստանում՝ ձուլման: Միաբանության ընդհանուր արբահայր Իգնատիոս վարդապետ Կյուրեղյանը նայելով իշխանին ասում է. «Հայ ժողովուրդը շատ ավելի ահեղ ժամանակներ ու բռնություններ է տեսել, նվազել է թվով, բայց մնացել է ոգով կայուն և անվթար: Մեր հույսը Աստծո վրա է, մեր ժողովրդի տոկոսության և պատմության անհիմնալի ընթացքի վրա է»¹⁹:

Մխիթարյան միաբանության գործունեության դասական շրջանն ընդգրկում է 1701-1901 թթ.: Խորհրդանշական է, որ միաբանության հիմնադրման 200-ամյակի տարում վախճանվեց Ղևոնդ Ալիշանը և նույն՝ 200-ամյակին նվիրված կոթողային հատորը գրեց միաբանության նոր սերնդին և քննական հայագիտությանը պատկանող Բարսեղ Սարգիսյանը²⁰:

19 Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1974, էջ 222-223: [Ališanə žamanakacicneri howšerowm, Er., 1974, p. 222-223].

20 Տե՛ս Հ. Բ. Սարգիսյան, Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905: [H. B. Sargisyan, Erkharyiwramya grakanakan

Այսպիսով, Մխիթարյանների այս 200-ամյա դասական շրջանի գործունեությունը բաժանվում է 3 փուլի.

Առաջին՝ Մխիթար Աբբահորով սկսված կրոնաեկեղեցական գործունեության շրջան:

Երկրորդ՝ դասական հայագիտության ձևավորման շրջան:

Երրորդ՝ Ազգային ժամանակագրի վրա հիմնված բանաստեղծության, պատմագիտության և գրականագիտության շրջան: Վերջինս իր բարձրակետին հասավ Ալիշանի գիտա-գեղարվեստական ստեղծագործություններով:

Մխիթար Սեբաստացին եթե հիմնադիրն էր միաբանության, ապա խորհրդանիշը, Մխիթարյան միաբանության գաղափարի հավաքական կրողը դարձավ Ալիշանը: Ինչպես Դանիել Վարուժանն է գրում. «Ալիշանի ոգին մեջ ամբողջ Մխիթարյան առաքելությունը կտեսնեմ: Նույնիսկ ինչոր Մխիթարի՝ իրենց հանճարային հիմնադրին մեջ դեռ տարտամ ու անկատար, դեռ ներշնչումի և ձգտումի վիճակին մեջ էր, եկած խտացած ու ի գործ փոխված է Ալիշանի մեջ»²¹:

Վարդան Գևրգիսյան–հետազոտում է հայ հին գրականությունը, հատկապես հայ միջնադարյան բանաստեղծության պատմությունը: Երկար տարիներ զբաղվելով հայկական ձեռագրերի նկարագրությամբ՝ կատարել է հայկական ձեռագրերի և հայ հնատիպ գրքի համեմատական քննությունը:

Summary

THE UNQUENCHABLE LIGHT OF SAINT LAZARUS ISLAND

Dedicated to the 300th anniversary of the establishment of the
Mekhitarist Congregation in Venice

Vardan G. Devrikyan

Key words – Mkhitar Sebastatsi, Mekhitarist Congregation, St. Lazarus Island, Mikayel Chamchian, Songs (Psalms, սաղմոս) of the Patriarch, “Bazmavep”.

The creation of the Mekhitarist congregation in the 17th century was preceded by attempts to revive the traditions of the Armenian monastic life. Mkhitar Sebastatsi became one of the representatives of this movement.

In the 1690s, having bypassed the monasteries in the territory of Armenia, he became convinced that it was impossible to create a congregation that would be able to carry out the tasks of the church–spiritual and scientific–cultural life set by reality itself under the unfavorable conditions of that time.

gorcownéowt'iwñ ev nšanawor gorcičner Venetkoy Mxit'arean miabanowt'ean, Venetik, 1905].

21 **Դանիել Վարուժան**, Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հատ. Գ., Եր., 1987, էջ 182: [Daniel Varujan, Erkeri liakatar jogovacu ereq hatorov, hat. G., Yer., 1987, p. 182].

That is why he had to found a Catholic congregation in order to enlist the support of Rome. The congregation, founded in Constantinople in 1701, then it was transferred to Morea (Ancient Peloponnese) in 1703, and finally in 1717 it is settled on the island of St. Lazarus in Venice, where it operates till nowadays.

One of the main reasons for reason for choosing this place was the developed typography of Venice: it was one of the centers of printing in Europe. Here it was possible not only to print high-quality publications, but also to transport them by sea to Constantinople and Smyrna.

We have highlighted the work of the Mekhitarists in separate sections of this article and showed what fundamental researches they carried out in the field of linguistics, lexicography, historiography, historical geography of Armenia, which were subsequently printed with high quality.

A high-quality edition of bible was published, in which Armenian and Latin canons were compared. Original sources of numerous works of the Armenian and translated literature were compiled.

Mekhitarists also contributed to the creative development of the traditions of ancient Armenian literature, smoothly moving to classicism, and then to romanticism, which were given an accentuated national-patriotic orientation.

Резюме

НЕУГАСИМЫЙ СВЕТ ОСТРОВА СВЯТОГО ЛАЗАРЯ

Посвящается 300-летию установления Конгрегации Мхитаристов в Венеции

Вардан Г. Деврикян

Ключевые слова – Мхитар Себасти, Мхитаристская конгрегация, остров Святого Лазаря, Микаел Чамчян, Песни Патриарха, “Базмавен”.

Созданию Мхитаристской конгрегации в 17-ом веке предшествовали попытки возрождения традиций армянской монастырской жизни. Мхитар Себасти стал одним из представителей этого движения.

В 1690-е годы, обойдя монастырь за монастырем на территории Армении, он убедился, что в неблагоприятных условиях того времени невозможно создать такую конгрегацию, которая в силах осуществить задачи церковно-духовной и научно-культурной жизни, поставленные самой действительностью. Именно поэтому он вынужден был основать католическую конгрегацию, чтобы заручиться поддержкой Рима. Конгрегация, основанная в 1701 году в Константинополе, затем перенесенная в 1703 году в Морею (Древний Пелопонес), в 1717 обосновывается на острове св. Лазаря в Венеции, где и действует до нашего времени.

Одной из основных и главных причин такого поворота стало то, что

ՀԱՅԿԱԿՈՍ

Թ (ԺԵ) րափր, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017

ՎԿԱ հասանալիության հանդես

Венеция являлась одним из центров книгопечатания в Европе. Здесь было возможно не только печатать высококачественные издания, но и перевозить их по морю в Константинополь и Смирну.

В данной статье отдельными разделами освещена работа мхитаристов и показано, какие фундаментальные исследования проведены ими в области языкознания, лексикографии, историографии, исторической географии Армении, которые впоследствии были напечатаны с высоким качеством.

В богатом издании была напечатана Библия, в которой сопоставлялись каноны на армянском и латинском языках. Были составлены оригинальные источники многочисленных произведений собственно армянской и переводной литературы.

Мхитаристы способствовали также творческому развитию традиций древней армянской литературы, плавно перейдя к классицизму, а затем и к романтизму, которым придали подчеркнутую национально-патриотическую направленность.